**Արձանագրության 5**
**Երևանի քաղաքապետարանի կարիքների համար միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/103» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք.Երևան

31.05.2019թ.
ժամը՝ 17:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Օրբելյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Գասպարյան, Լ. Բաբայան, Ա. Գյուրջյան

Հանձնաժողովի անդամ՝ Կ. Ղազարյանը բացակա է
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

**1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին**

---

(Գ. Օրբելյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է պատասխան, ըստ որի՝ «Պրեստիժ լենդ» ՍՊԸ-ն հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 100.331 /մեկ հարյուր հազար երեք հարյուր երեսունմեկ/ ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է 1-ին չափաբաժնի մասով մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:*

1.2 Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 44-րդ կետով՝ որոշեց մերժել «Պրեստիժ լենդ» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Էյ Էմ Էս Լայն» ՍՊԸ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:*

## 2. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Գ. Օրբելյան)

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.2-րդ կետով ընդունված որոշումը, գնահատող հանձնաժողովը որոշեց «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն, հայտարարել անգործություն 1-ին չափաբաժնի մասով / 5 օրացուցային օր / և անգործության ավարտից հետո իրավերով նախատեսված կարգով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

2.2 Հաստատել 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:*

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի Նախագահ`** | | Գ. Օրբելյան |
| **Անդամներ`** | | Լ. Բաբայան |
| | | Ռ. Գասպարյան |
| | | Ա. Գյուրջյան |
| **Քարտուղար`** | | Ի. Եղիազարյան |